

Մկրտիչ Աղա Սանասարեան<sup>1</sup>, Համո-գուելով գիտնական Կարապետ Եզեանցի<sup>2</sup> կողմէ, 1881 թուականին՝ գաւառական յարմարագոյն քաղաքը նկատելով էրզուրումը (Կարին), հոն կը բանայ Սանասարեան անունով վարժարան մը եւ անոր յարատեւութիւնը ապահովելու համար կը կտակէ դրամապահուիս, որ կը կազմէ վարժարանի անձեռնմխելի սեպհականութիւնը<sup>3</sup>:

Մկրտիչ Սանասարեանի 10 յուլիս 1886 թուակիր կտակագրին համաձայն՝ կտակակատարներ կ'ըլլան Կարապետ Եզեանց, Գէորգ Եւանգուլեանց եւ Լեւոն Տիգրանեանց (ապա կը հրաժարի): Կ. Եզեանց կտակին հիման վրայ կը պատրաստէ կանոնագրութիւն մը, որն 1892 յուլիս 16-ին կը վաւերացուի Ազգային Կեդրոնական Վարչութեան կողմէ: Սոյն կանոնագրութեան համաձայն՝ Կ.Պոլսոյ Պատրիարքի նախագահութեամբ, վեց Պոլսեան անդամներով կը կազմուի Սանասարեան խնամակալութիւնը, որուն պաշտօնը կ'ըլլայ

Հոգ տանիլ վարժարանին անշարժ ստացուածքին, պահպանել եւ արդիւնաւորել արժեթուղթերը, ընդհանուր պաշտպան հանդիսանալ վարժարանին նիւթական ու բարոյական շահերուն<sup>4</sup>:

Մ. Սանասարեան իր կտակով կամք կը յայտնէ, որ իր կտակած գումարին կէսը յատկանայ յանուն վարժարանի կալուածներու գնման: Ուստի, խնամակալութիւնը, խորհրդակցելով կտակակատար Կ. Եզեանցի հետ, 1899 յուլիս 21-ին վարժարանի Պետական Դրամատան մէջ գտնուող անձեռնմխելի գումարէն 19.000 Օսմանեան լիրա վճարելով՝ Ստամպուլի մէջ կը գնէ կալուած մը (Սանասարեան խան<sup>5</sup>), որուն բերելիք եկամուտը «վազըֆ» կ'ընէ, այսինքն՝ կը յատկացնէ Սանասարեան վարժարանի աղքատ մանուկներուն սնուցման, զգեստաւորման, ինչպէս նաեւ՝ գիտութեան եւ արհեստ սորվելու գործին կալուածին «միւթէվէլլի» (կտակակատար) կարգելով Թուրքիոյ Հայոց օրուան Պատրիարքը: Խանին ամբողջ տարածութիւնը 2606 կանգուն 8 մատ, «միւլք ազար» (եկամուտաբեր կալուած) ըլլալով կը գնուի եւ վազըֆ կ'ըլլայ վարժարանի անուան: Խանը կ'ունենայ կալուածներ, որոնք կը բաղկանան մթերանոցներէ եւ սենեակներէ, որոնց ամէնն ալ կը վարձուին եւ Հասոյթ կ'ապահովեն 1903 թուականին 1444 Օսմանեան լիրա<sup>6</sup>:

Սանասարեան վարժարանը կ'ունենայ Կ. Պոլսոյ եւ Կարինի մէջ 32 կալուածք, որ

1 Մկրտիչ Աղա Սանասարեան (1818 Թիֆլիս - 1890 Փարիզ)՝ Ռիմնադիր Կարինի Սանասարեան եւ Վահի Սանդիստեան վարժարաններու: Ազգաւեր եւ Ռեալտեա բարերար Մկրտիչ Աղա Սանասարեանի նկատմամբ կ'ըլլայ քաջալերել չքատոր ուսումնասէր երիտասարդները եւ ուսուցիչներ պատրաստել կովկասի վարժարաններու: 2 Կարապետ Եզեանց (1855-1903)՝ կտակակատար հոգեւոր Մ. Սանասարեանի: Ծնած ու սպրած է Մոսկուա, ուր 19 տարեկանին պաշտօնի կը կոչուի Ռուսիոյ Ներքին գործոց նախարարութեան, ապա Լուսատրութեան նախարարութեան մէջ: Հայ մեծահարուստներու մէջ ազգային զգացումներ կ'արթնցնէ եւ զանոնք կը քաջալերէ ու կ'ատաշնորհէ դէպի ազգային բարեգործութիւն: 3 Ընդարձակ օրացոյց Ազգային հիւանդանոցի, Կ.Պոլիս, 1900, էջ 211:

4 Քսանասարեան տեղեկագիր Սանասարեան վարժարանի (1881-1901), Կ. Պոլիս, 1903, էջ 8-9: 5 Կ. Պոլիս, Սիրքեհի Էմիլի Թաղ Տեմիր-Գափու փողոց թիւ 5: 6 Քսանասարեան տեղեկագիր Սանասարեան վարժարանի (1881-1901), էջ 86-87:

րոնք մեծ շահոյթներ կը բերեն անոր: Ասոնցմէ զատ կ'ունենայ 1.200.000 ֆրանսական ոսկեդրամ ֆրանքի արժեթուղթեր, որոնք ի պահ կը դրուին Բեթրոկրատի Պետական դրամատան մէջ՝ բնաւ ետ չառնուելու, լոկ տոկոսները գանձուելու պայմանաւ<sup>7</sup>:

Սանասարեան վարժարանը 1912 թուականին կը տեղափոխուի Սեբաստիա, ուր կը բացուի Ս. Նշան վանքի շրջափակին մէջ 24 սեպտեմբեր 1912-ին, տարեկան շուրջ 2.000 Օսմանեան Ոսկի պիւլստէյով<sup>8</sup>, իսկ երեք տարի անց՝ 1915-ին, 34 տարիներ իր կրթական եւ մանկավարժական առաքելութիւնը կատարելէ, Հայութեան Հարիւրաւոր ուսուցիչներ, մտաւորականներ եւ հանրային գործիչներ տալէ վերջ կ'աւերուի<sup>9</sup>: Վարժարանը իր բոլոր գոյքերով, գիրքերով եւ գործիքներով կը գրաւուի կառավարութեան կողմէ՝ տեղի ունեցած դէպքերու ընթացքին, եւ գոհ կ'երթան պաշտօնէութիւնն ու ամբողջ աշակերտութիւնը: Կը գրաւուին նաեւ վարժարանի սեփականութիւնը եղող Կարնոյ քաղաքամէջի Հողերը, Կարնոյ շրջակայքը գտնուող Աղվերանի ազարակը: 1915-1920 թթ. կարելի է'ըլլար վերաբանալ վարժարանը, որովհետեւ Ա. Ընդհանուր Պատերազմի ընթացքին, կտակակատարը զրկուած կ'ըլլայ Սանասարեան վարժարանի կալուածներէն կարեւորագոյնի՝ Սանասարեան խանի եկամուտներէն, քանզի կառավարութիւնը ձեռք կը դնէ խանին վրայ եւ զայն պետական սեփականութիւն հռչակելով, վրան յարկեր եւ ներքեւն ալ նկուղներ շինելով կը վերածէ Ոստիկանութեան պաշտօնատան<sup>10</sup>:

7 ՀՀ Ազգային արխիւ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 3928, էջ 25: 8 ՀՀ Ազգային արխիւ, ֆոնդ 193, ցուցակ 1, գործ 351, էջ 2: 9 Անահիտ Աստուխեան, Կարնոյ Սանասարեան վարժարանը. «Հայրենիք», 1997 մարտ, թիւ 3: 10 ՀՀ Ազգային արխիւ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 3928, էջ 24-25:

Համաձայնական կառավարութեանց Պոլիս մուտքէն մէկ տարի վերջ, Պատրիարքարանը Բերայի նօտարութեան միջոցաւ ոստիկանութեան տնօրէնութեան կը պահանջէ խանին յետնեալ վարձքերը, ինչպէս նաեւ՝ նոյն տարւոյ վարձքը: Տնօրէնութիւնը այնքան պիւլստէյ չունենալով՝ խանը կը պարպէ ինքնաբերաբար, որովհետեւ խանը ոչ ապաստանականացուած եւ ոչ ալ բոլորովին գրաւուած կ'ըլլայ:

Ջաւէն Պատրիարքի օրով (1919 թուականի վերջերս) խանը վարձու կը տրուի, որ կը շարունակուի նաեւ Տեղապահ՝ Գէորգ կը շարունակուի եւ Նարոյեան ՊատԱսլանեան Սրբազանի եւ Նարոյեան ՊատԱսլանեան Սրբազանի կամքը կատարել չեն մտածեր բարերարին կամքը կատարելու խանին եկամուտով վերաբանալ Սանասարեան վարժարանը, գուցէ այդ շրջանին Իսթանպուլի մէջ, այլ նաեւ գանձուած այդ դրամներով չեն գներ նոր հաստիքներ կալուած մը, որ կամքն էր բարերարին<sup>11</sup>:

Սանասարեան խնամակալութիւնը 1927-1928 տարեշրջանէն սկսեալ կրթական գործին իր գործուն մասնակցութիւնը կը բերէ եւ կեդրոնական վարժարանին նիւթաբերէ կան հոգը կը ստանձնէ, որուն փոխարէն կ'որոշուի Հանգուցեալ բարերարին անուանելոցնէ կեդրոնական վարժարանի անուանին վրայ<sup>12</sup>: Կրթական Տնօրէնութեան արտօնագիրը 1931-1932 տարեշրջանին կուգայ եւ վարժարանին անունը կարճ շրջան մը կը վերածուի կեդրոնական-Սանասարեանի: Նոյն տարեշրջանի շրջանաւարտներուն վկայականները նախ կը պատրաստուին «Կեդրոնական-Սանասարեան Լիւթ» անու-

11 «Արեւ», 4 մայիս, 1929: 12 Թահմազար Յովհաննէս, Սանասարեան կտակի Պատր, Իսթանպուլ, 1939, էջ 7: 13 «Հայաստանի կոչման», Ն. Ետրք, 15 հոկտեմբեր, 1927, թիւ 42:

նով բայց յետոյ կը փոխուին<sup>14</sup>, որովհետեւ շարունակուող դատի պատճառաւ Կրթական Տնօրէնութիւնը կը հրահանգէ վերցնել «Սանասարեան» անունը, ինչպէս նաեւ այն անունով պատրաստուած կնիքները:

1928 Հոկտեմբերին Թուրք կառավարութիւնը, պատրուակելով, որ Սանասարեան խանին տէրերը փախստական են եւ խանը փոխանորդաբար կը կառավարուի, շէնքը իբր «Լքեալ գոյք»<sup>15</sup> կը փոխանցէ Պոլսոյ կուսակալութեան՝ իբր անոր սեփականութիւնը: «Իտարէ ի Հուսուսիյէ»-ն (Իսթանպուլի կուսակալութեան մէկ ճիւղը) խանը կը գրաւէ իբրեւ «Լքեալ գոյք»՝ առարկելով, թէ բարոյական անձնաւորութիւններէ լքեալ մնացած գոյքերը եւ կրթական գործի յատկացուած «վագֆ»-ները ըստ օրինի կը փոխանցուին իրեն<sup>16</sup>: Կը միջամտէ նաեւ Սանասարեան կտակի գործադրութեան գործին, «Հաճըզ» դնելով (առգրաւելով) խանին «վագֆ» եղած եկամուտներուն վրայ<sup>17</sup> եւ կ'արգիլէ կտակաւատար (միւլթէվէլի) Մեսրոպ Նարոյեան Պատրիարքը զանոնք գանձելէ<sup>18</sup>: Իբրեւ «Լքեալ գոյք»՝ կը գրաւուի ու Պոլսոյ նահանգային վարչութեան կը փոխանցուի նաեւ էրզուրումի Սանասարեան կրթարանը<sup>19</sup>:

14 Վարդան Կոմիտաս, Կեդրոնականը՝ Հանրապետական Օրջանիւն, «Շողակաթ Տարեգիրք» 1971-1972, Իսթանպուլ, 1972, էջ 28:  
15 14 սեպտեմբեր 1915-ին հրատարակուած «Լքեալ գոյքերու օրէնք»-ին համաձայն՝ «լքեալ գոյք» կ'անուանուին ու օրինականօրէն կ'իրացուին այն բոլոր շարժուն եւ անշարժ գոյքերը, որոնք Հայերը կը պարտաւորուին լքել 1915 թ. մեծ եղեռնէն սկսեալ:  
16 «Արեւելք», 29 մարտ, 1932:  
17 Դատին ամբողջ տեղութեանը 8 տարի, խանին հաստիքները, որ կը հասնի 180.000 ոսկիի, կը կուտակուի դատական իշխանութեան ձեռքը:  
18 «Յառաջ», 13 հոկտեմբեր, 1928, արտատպուած՝ 8 հոկտեմբեր, 1928 թուականի օրաթերթէն:  
19 «Ազդարար», 18 հոկտեմբեր, 1928:

Պոլսոյ Պատրիարքի նախագահութեամբ ժողով կը գումարուի Սանասարեան խնամակալութեան եւ քանի մը իրաւագէտներու մասնակցութեամբ, ուր կ'որոշուի դիմել դատավարութեան:

Այսպէս՝ Սանասարեան խանի ու կտակի դատը կը սկսի 23 Հոկտեմբեր 1928-ին Քաղաքային Բ. Դատարանին առջեւ, ուր խանի «միւլթէվէլի» (կտակաւատար) Նարոյեան Պատրիարքի փոխանորդները կ'ըլլան փաստաբաններ՝ Մ. Նարլեան, Նէճաթի Պէյ եւ Լեւոն Զիվէր:

20 ապրիլ 1929 թուականին Պոլսոյ քաղաքային Բ. Դատարանը միաձայնութեամբ կ'որոշէ, թէ Նարոյեան Պատրիարք իրաւասու չէ դատ բանալու, զի Պատրիարքը «միւլթէվէլի»-ի Հանգամանքը չի լրացներ եւ նաեւ Պատրիարքութիւնը իրապէս եւ իրաւապէս գոյութիւն չունի: Պատրիարքարանի փաստաբանները կը դիմեն Վճռաբեկ ատեանին, որուն չորս անգամ արտայայտուելէն վերջ, որ կը տեւէ երկու տարի, կը Հաստատուի, թէ Հայոց Պատրիարքի պաշտօն մը գոյութիւն ունի, եւ ան խանին «միւլթէվէլի» ըլլալու Հանգամանքով իրաւունք ունի իբրեւ դատախազ ներկայանալու: Ապա կուսակալութեան փաստաբանները կը պնդեն, թէ դատը պէտք է տեսնուի Պետական Խորհուրդի առջեւ՝ իբրեւ «Լքեալ գոյքերու դատ», որով Իրաւական Բ. ատեանը իրաւասու չէ:

Այս կնճիռը եւս կը Հարթուի Պատրիարքարանի փաստաբաններուն տեղին պաշտպանումով, բայց Հազիւ երեք տարի վերջ կարելի կ'ըլլայ մտնել խնդրին էութեան մէջ<sup>20</sup>:

Տեղի կ'ունենայ դատական կատաղի գօտեմարտութիւն մը՝ անթիւ միջադէպերով, որոնք կը վերջանան ի նպաստ Պատ-

20 «Արեւելք», 29 մարտ, 1932:

րիարքին, Իրաւական Բ. Ատեանի 28 մարտ 1932 թուակիր վճիռով<sup>21</sup>:

Դատակորոյս «Իտարէ ի Հուսուսիյէ»-ն կը դիմէ Վճռաբեկին՝ պնդելով, թէ կտակը չի գործադրուիր, որը կը բեկանէ վճիռը՝ յանձնարարելով քննել, թէ էրզուրումի (այս պա Սըվազի) Սանասարեան վարժարանը փակուելէ վերջ գոյութիւն ունի՞ նոյնանուն վարժարան մը, ուր ազգին չքաւոր մանկտիին գիտութիւն եւ արուեստ կը սորվեցնեն: Քննել նաեւ թէ կտակագրի տրամադրութիւնները, ըստ կտակային պայմաններուն, կը շարունակուին՞ գործադրուիլ եւ Հասոյթները կը գործածուին՞ կտակին Համաձայն, քանի որ վագֆիյէյին (կտակագիր) մէջ ցոյց տրուած է, թէ վարժարանին դադարման պարագային խանին եկամուտները, ծախքերը Հանուելէն վերջ, կուտակուած Հասոյթը կը պահուի միւլթէվէլիին» ձեռքին մէջ, յարմար «միւլթէվէլի» (եկամուտաբեր կալուած) մը գնելով՝ նոյն «վագֆի» վրայ կ'աւելցուի եւ ան ալ վարձու կը տրուի:

Պատրիարքարանի փոխանորդները բացատրագրով կը պարզեն, թէ կտակին տրամադրութիւնները տառացի կը գործադրուին եւ կը պահանջեն որոշումի սրբազրութիւն, որը սակայն կը մերժէ Վճռաբեկը: Կուսակալութիւնը եւս կը պահանջէ որոշումի սրբազրութիւն՝ ուզելով բեկանում մը ըլլայ վերջնական, այսինքն՝ վճիռ թող կայանայ, թէ Սանասարեան խանը լքեալ է, ուստի պէտք է փոխանցուի նահանգային իշխանութեան, որն ալ կը մերժուի Վճռաբեկի կողմէ<sup>22</sup>:

Այսպէս՝ 3 յունիս 1933 թուականին Պոլսոյ Իրաւական Բ. ատեանին առջեւ կը վերսկսի Սանասարեան խանի դատը՝ ճշդելու Համար, թէ Սանասարեան «վագֆը»

21 «Յառաջ», 3 ապրիլ, 1932:  
22 «Յառաջ», 12 յունիս, 1933:

այդ անունը կրող վարժարանի մը օժանդակութիւն կ'ընէ, թէ ոչ:

Պատրիարքարանի փաստաբանները 18 Հոկտեմբեր 1933 թուականին դատարան կը յանձնեն իրենց պատրաստած յիշատակագիրը (layiha), ուր կը բացատրեն, թէ Սանասարեան վարժարանի էրզուրում եւ Սըվազի մէջ դադարելէն վերջ վագֆին Հասոյթները յատկացուած են Կեդրոնական վարժարանի կարօտ ուսանողներուն եւ այս վարժարանի արտօնական արտօնութեամբ աւթիւ ալ պաշտօնական արտօնութեամբ Սանասարեան անունը կցուած է վարժարանի անունին<sup>23</sup>:

Բայց «Իտարէ ի Հուսուսիյէ»-ի փաստաբանները իրենց յիշատակագրին մէջ կը յայտնեն, թէ Կեդրոնական վարժարանը յայտնեն, թէ Կեդրոնական վարժարանը ունէ կապ չունի Սանասարեանի հետ, քանի որ Սանասարեան վարժարանը բացուած է որ Սանասարեան էրզուրում, իսկ Կեդրոնական վարժարանը 1886-ին Կ.Պոլսոյ մէջ: Գալով Սանասարեան յորջորջման, ան Կեդրոնականի նասարեան յորջորջման, ան Կեդրոնականի վրայ կ'աւելցուի դատին սկսելէն վերջ միայն: 1920-1928 թթ., երբ խանին վարձքերը կը գանձուէին, գոյութիւն չունէր Կեդրոնական-Սանասարեան քաղաքեալ անունով վարժարան մը<sup>24</sup>:

Դատը կը վերջանայ 15 մայիս 1935-ին, եւ Պոլսոյ Իրաւական Բ. ատեանը կը մերժէ դատախազ կողմին (Պատրիարքարանին) պնդումները՝ պատճառ ցուցնելով, թէ պաշտօնական արձանագրութեամբ չէ ապացուցուած, որ նախապէս գոյութիւն ունեցող վարժարանը կը շարունակուի Պոլսոյ Կեդրոնական վարժարանին մէջ:

Դժբախտաբար, ոչ Կեդրոնականը, որ կը ստանայ դրամը, եւ ոչ ալ Պատրիարքարանը, որ կը յանձնէր, չեն արձանագրած ըստ օրինի բռնուած տետրակի մը մէջ այս յատկացումը: Իսկ Հայերէն տոմարները կը

23 «Արեւելք», 19 հոկտեմբեր, 1933:  
24 Ծանցագրար Յովհաննէս, Սանասարեան կտակի դատը, Իսթանպուլ, 1939, էջ 13-14:

